



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1903 № 448

ՄԱՐԴՈՒԹՅՈՒՆԻՑ



БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

ԱՐԱՅԻ ՊԱՇՏՈՒԿ



Թարգմ.

ԽԱՐԴԻ Մ. ԲԱՌԱՎԱՐԵԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐԱԳՈԼ

Տպ. Մոլդուսանիք | Տպ. Մալհաննից

1902

891.71

Գ-83

531.21  
9-83

27 AUG 2006

19 NOV 2010

ՄԱՐՍԻ ԳՈՐԾԻՑ

# ՄԱՐՍԻ ԳՈՐԾԻՑ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

Թանգօթ.

ԱՆԳԼԻԿԱՆ ՄԱՐՏԻՆՈՎԻ



ԱԴՐ ՔԱՆԵՐԻ ՊՈԽ

Տպ. Ա. Մալխասունի Տպ. Ա. Մալխասունի

1902

21 MAR 2013

10.6.98


ՏԵՐԱԾ

Дозволено цензурою, Тифлисъ 8-го Октября 1902 г.



60987-67

## ԱՐԱՅԻ ԴԱՅՏՈՒՄ.



(1897).

Ինք դուրս եկանք Պերեկոպից խիստ վատ տըրամադրութեան տակ—քաղցած, ինչպէս գալլեր, ու չարացած արար—աշխարհի վրայ: Ամբողջ կէս-օրուալ ընթացքում մենք անպարդիւն էինք գործ գնում մեր բոլոր շնորհքն ու ջանքը այն բանի համար, որպէսզի մի որևէ բան թուցնէինք կամ վաստակէինք, և երբ համոզուեցինք, վերջապէս, որ ոչ այդ, ոչ այն մեզ չի լաջողուի, վճռեցինք առաջ գնալ: Ուր առհասարակ—առաջ:

Դա էր մեր միաձայն և միմիանց յալտնած վճիռը, բայց մենք պատրաստ էինք և բոլոր դէպերում առաջ գնալու կեանքի այն շաւզով, որով վաղուց արդէն գնում էինք, — դա նոյնպէս սուս ու փուս վճռել էր մեզանից իւրաքանչիւրը, և թէե բաց չէինք յալտնում, բայց այդ պարզ փալում էր մեր քաղցած աչքերի մռայլ ցոլքի մէջ:

Մենք երեք հոգի էինք. բոլորս էլ նոր էինք ծանօթացել, հանդիպելով միմիանց խերսօնում, մի գինետնում Դնէպրի ափին:

Մէկը մեզանից երկաթուզու բատալիոնի<sup>1)</sup> զինւոր էր, յետոյ — որպէս թէ եղել էր Վիսլայի մօտ ընկած ճանապարհներից մէկի ճանապարհային վարչեա, շիկագոյն և մսոտ մի մարդ, պաղ, մոխրագոյն աչքերով. նա գիտէր խօսել գերմաներէն և շատ մանրամասնօրէն ծանօթ էր բանտալին կեանքին:

Մեր բարեկամը չէ սիրում շատ խօսել իր անցեալի մասին, միշտ դրա համար շատ թէ քիչ հիմնական պատճառներ ունենալով, ուստի մենք բոլորս հաւատում էինք միմիանց — գոնէ արտաքուստ հաւատում էինք, որովհետեւ ներքուստ

1) Հետեակ՝ գումարտակ, բաղկացած 600-ց մինչև 1000 հողեւ ծան. Ըստդ.

մեզանից ամեն մէկը հէնց ինքն էլ իրեն լաւ չէր հաւատում:

Երբ մեր երկրորդ ընկերը, մի չորչըիկ և փոքրիկ մարդ, բարակ շրթունքներով, միշտ կասկածամտութեամբ սեղմած, խօսում էր իր մասին՝ թէ ինքը Մոսկուալի համալսարանի նախկին ուսանող է — ես և զինւորը ընդունում էինք այդ իրու իրողութիւն: Խսկապէս, մեզ համար ուղղակի միենոյն էր, եղել էր արգեօք նա երբեկցէ ուսանող, խուզարկու թէ գող, — կարևոր էր միայն այն, որ մեր ծանօթութեան բոպէին նա հաւասար էր մեզ — քաղցում էր, քաղաքներում ձեռք էր բերել ոստիկանութեան առանձին ուշագրութիւնը և գիւղերում գիւղացիների կասկածոտ վերաբերմունքը, ատում էր թէ նրան և թէ սրանց թոլը, հալածական և քաղցած գաղանի ատելութեամբ, մտածում էր ընդհանրապէս վըժէխնդիր լինել ամենքից և ամեն բանից, — մի խօսքով, թէ բնութեան թագաւորների ու կեանքի տէրերի շարքում իր բռնած գիրքով և թէ տրամադրութեամբ մեր խօսկական կտորն էր:

Դժբախտութիւնը — ամենասպինդ շաղախն է միացնելու համար նոյն իսկ միմիանց ուղղակի հակառակ բնութիւններ, իսկ մենք բոլորս հա-

մողուած էինք, որ իրաւունք ունենք մեզ դըժ-  
բախտ համարելու:

Երրորդը ես էի: Իմ մանկութեան օրերից  
ինձ յատուկ համեստութեամբ, ես ոչ մի խօսք  
չեմ ասի իմ արժանաւորութիւնների մա-  
սին և, չցանկանալով ձեզ միամիտ երևալ, կը-  
լուեմ և իմ պակասութիւնների մասին: Բայց, թեր-  
ևս, իբրև նիւթ ինձ բնորոշելու համար,  
ասեմ, որ ինձ միշտ համարել եմ աւելի լաւ,  
քան ուրիշներին և մինչեւ այսօր էլ աջող կեր-  
պով շարունակում եմ պարապել այդ բանով:

Սյդպէս, մենք դուրս եկանք Պերեկօպից և  
գնում էինք առաջ, ի նկատի ունենալով այդ  
օրուան համար չոպաններին<sup>1)</sup>, որոնցից միշտ կա-  
րելի է հաց ինդրել և որոնք այդ շատ քիչ ան-  
գամ են մերժում անցորդ մարդկանց:

Ես գնում էի զինուորի կողքից. «ուսանող»  
քայլում էր մեր յետեից: Նրա ուսերի վրայ կախ  
էր ընկել ինչոր քան, որ լիշեցնում էր ըստ  
ինքեան մի պիճակ. գլխին, սուր, անկիւնաւոր  
և հաւասար խուզած, հանգչում էր լայնեզր  
գլխարկի մնացորդը. գորշ անդրավարտիկը զա-  
նազանագոյն կարկատաններով ձգում էր նրա

բարակ ոտիկները, իսկ թաթերին նա սարքել էր  
լարաններով, որ ոլորել էր իր հանդերձի աստա-  
ռից, ճանապարհին գտած կօշիկի մի սրունք,  
անուանել էր այդ սարքը հողաթափներ (սան-  
դալներ) և քայլում էր իր համար լուռ ու մունջ,  
բարձրացնելով ահագին թող և արձակելով փայլ  
իր կանաչաւուն փոքրիկ աչքերից: Զինորը հա-  
գել էր կարմիր զումաշել շապիկ, որը, իր ա-  
սելով, ճարել էր „սեփական ձեռքով“ Խեր-  
սօնում. շապիկի վրայից նա ուներ և մի տաք  
բամբակէ բաճկոն. գլխին, զինորական կանո-  
նադրութեան համաձայն,—դրած էր, „աջ ուն-  
քին նայող վերին շրջանակի կոտրած մասով“,  
անորոշ գոյնով զինուորական գդակ. ոտների վրայ  
թափ էր գալիս չումակի լայն շալուարը:

Նա բոբիկ էր:

Ես նոյնպէս հագնուած ու բոբիկ էի:

Մենք գնում էինք, իսկ մեր շուրջը ամեն  
կողմ հսկայական թափով տարածուել էր դաշ-  
տը և, ծածկուած ամառային ջինջ երկնքի կա-  
պուտ տօթալին գմբէթով, ընկել էր ինչպէս ա-  
հագին, կլոր սե ափսէ: Գորշ թոգոտ ճանապար-  
հը կտրում էր նրան լայն շերտով և այրում մեր  
ոտները: Տեղ-տեղ պատահում էին հնձած որանի  
ստեաւոր շերտեր, որոնք տարօրինակ նմանութիւն

1) Խաշնաբած, հովիւ. ծ. թ.

ունէին զինւորի վաղուց չածիլած ալտերին:  
Զինւորը գնում էր և երգում կերկերուն  
հաստ ձայնով.

—...Եւ սուրբ Յարութիւն Քո երգեմք և  
գովաբանեմք...

Իր ծառալութեան ժամանակ նա կատարում  
էր տիրացուի պաշտօնի պէս ինչ-որ բան բատա-  
լիոնի եկեղեցում և դիտէր անթիւ քանակու-  
թեամբ եկեղեցական տաղեր, նախերգանքներ ու  
համառօտ օրհներգութիւններ, որոնց դիտու-  
թիւնն էլ հէնց, ի չարն էր գործ դնում ամեն  
անգամ, երբ մեր խօսակցութիւնը որևէ պատ-  
ճառով իրար չէր բռնում:

Առջեռմ, հորիզոնում, ըուսնում էին  
ինչ-որ կերպարանքներ մեղմ գծագրութիւննե-  
րով և փաղաքշալի նուրբ գոյներով՝ բաց-մանի-  
շակագոյնից մինչև քնքուշ—վարդագոյնը:

—Հաւանականօրէն, հէնց ալդ Խրիմի լեռ-  
ներն են,—ասաց «ուսանողը» չոր ձայնով:

—Լեռներ, —բացականչեց զինւորը,—շատ  
վաղ դու տեսար նրանց, բարեկամ: Ոմագեր են  
ալդ... ուղղակի ամպեր: Տեսնում ես, ինչպիսի  
ամպեր են—կարծես կաթով պատրաստած թը-  
թուաշ դոնդող լինեն...

Ես նկատեցի, որ անչափ հաճելի կ'լինէր,

եթէ հէնց ամպերը իսկապէս բաղկացած լինէին  
դոնդողից: Դա միանդամից զրգուեց մեր քաղցը—  
մեր օրերի չարիքը:

—Ա՛խ, դեւ,—հայհոյեց զինւորը, թքելով,—  
դոնէ մի հատիկ կենդանի հոգի ընկնէր ձեռ-  
քերս: Ոչոք... ստիպուած ենք, ինչպէս արջե-  
րը ձմրան, մեր սեփական թաթերը ծծել...

—Ես ասում էի, որ պէտք էր մարդաբնակ  
տեղեր գնալ,—խրատական կերպով յայտնեց ու-  
սանողը:

—Դու ասում էիր,—վրդովուեց զինւորը:—  
Հէնց նրա համար էլ գու ուսեալ ես, որպէսզի  
ասես: Այստեղ ի՞նչ մարդաբնակ տեղեր կան:—  
Սատանան գիտէ՝ թէ սրտեղ են նրանք:

Ուսանողը լուեց, սեղմելով շրթունքները:  
Արեր մայր էր մտնում և ամպերը խաղում էին  
հորիզոնում զանազան, մի խօսքով անըմբըռ-  
նելի գոյներով: Բուրում էր գետնի և աղի հոտը:

Եւ այդ չոր ու անուշ բուրմունքից մեր ա-  
խորժակը աւելի ես սաստկանում էր:

Փորերս վեց-վեց էր անում: Դա մի արտա-  
սովոր և անախորժ զգացում էր. այնպէս էր  
թուում, թէ մարմնի բոլոր մկանուններից հիւ-  
թերը կամաց-կամաց գուրս են հոսում ինչ-որ  
տեղ, շոգիանում են, և մկանունները կորցնում

իրենց կենդանի ճկունութիւնը։ Փշաքաղող չորսութեան զգացումը լցնում էր բերանիս խոռոշը և որկորս, գլուխս խառնուել էր, իսկ աչքիս առաջ յաճախ կանգնում և փայլվում էին մութ բծեր։ Երբեմն նրանք ընդունում էին մսի ծխուղ կտօրների, հացի գնդերի<sup>\*)</sup> տեսք. յիշողութիւնս մատակարարում էր այդ „անցեալի տեսիլներին, համը տեսիլներին“ իրենց յատուկ համ ու հոտը, և այդ ժամանակ ստամոքսումս կարծես դանակ էր շուռ գալիս։

Մենք գնում էինք այն ու ամենայնիւ, նկարագրելով միմիանց մեր զգացումները և ուշի ուշով աչք ածելով չորս կողմը—թէ արդեօք չե՞ երեւալ որևէ տեղում մի սուրու ոչխար, և ականջ դնելով, թէ չե՞ լսուի թուրքի սայլի սուր ճոփնչը, որ մրգեր է տանում դէպի Հայկական շուկան։

Բայց դաշտը ամայի և լուռ էր։

Ելդ ծանր օրուայ նախընթաց երեկոյեան մենք երեքով չորս ֆունտ հաճարէ հաց էինք կերել և հինգ հատ ձմերուկ, իսկ անցել էինք մոտ քառասուն վերսա—ելքը չէր բռնում մուտքին.—և քնելով Պերեկոպի շուկայի հրապարակի վրայ, մենք քաղցից զարթնեցինք։

«Ուսանողը» իրաւացի էր մեզ խորհուրդ տալիս չպառկել քնելու, այլ գիշերուայ ընթացքում գործել... Բայց կարգին հասարակութեան մէջ չէ ընդունուած բաց խօսել սեփականութեան իրաւունքը խախտելու ծրագրների մասին, և ես լրում եմ։ Ես ուզում եմ միայն ճշշմարտախօս լինել, և ես շահ էլ չունեմ կոշտ լինելու։ Ես գիտեմ, որ մարդիկ շարունակ աւելի փափկասիրտ են դառնում մեր բարձր—կուլտուրական օրերին և նոյն իսկ, երբ բռնում են իրենց մերձաւորի կոկորդը, նրան խեղդելու ակնյալտնի նպատակով,—ապա աշխատում են այդ անել որքան կարելի է սիրավը կերպով, պահպանելով այն բոլոր վայելչութիւնները, որոնք տեղին են այդ դէպքում։ Իմ սեփական որկորի փորձը ստիպում է ինձ 'ի նըկատի առնել բարքերի այդ առաջադիմութիւնը, և ես պնդում եմ վստահութեան մի հաճելի զգացմունքով, որ այս աշխարհում ամեն բան զարգանում ու կատարելագործում է։ Մասնաւրապէս, այդ նշանաւոր գործողութիւնը ծանրակշիռ կերպով հաստատում է բանտերի, գինետների և անառականոցների աճումով։

Այդպէս, քաղցած թուքերս կուլ տալով և աշխատելով ընկերական խօսակցութեամբ ճնշել

<sup>\*)</sup> Հացի կուտ. Տ. թ.

մեր փորացաւը, մենք գնում էինք ամային և լուռ դաշտով, գնում էինք իրիկնամուտի կարմբրաւուն ճառագայթների միջով, որոնք լի էին ինչ-որ բանի մռայլ յուսով. մեր առջեւ թեքւում էր արել, հանդարտ խորասուզուելով մեղմ ամպերի մէջ, որոնք առատօրէն ներկուած էին նրա ճառագայթներով, իսկ մեր յետեկից և կողքերից կապտաւուն մշուշը, դաշտից դէպի երկինք բարձրանալով, նեղացնում էր մեզ շրջապատող անհամբոր հսրիզոնը:

— Տղէրք, վառելիք հաւաքեցէք խարոյկի համար, — ասաց զինւորը, վերցնելսվ ճանապարհի վրայից ինչ-որ կոճդ: — Ստիպուած ենք դաշտում գիշերելու... շաղ է: Աթարեղէն, ամեն տեսակ ճիւղ — բոլորը ժողովեցէք:

Մենք ցրուեցինք ճանապարհի այս ու այն կողմ և սկսեցինք հաւաքել չոր մոլախոտ և ամեն բան, ինչ որ կարող էր վառուել: Ըմեն անգամ հէնց որ հարկ էր լինում գետնին կուանալու, ամբողջ մարմնում առաջ էր գալիս քուուն ցանկութիւն լնկնել նրա վրայ, պառկել անշարժ և ուտել այն, սև ու պարարտ, շատ ուտել, ուտել մինչև ուժասպառ լինելը և ապա քնել: Թէկուզ ընդմիշտ քնել, միայն թէ ուտել, ծամել և զգալ, թէ ինչպէս տաք ու

պինդ խաշիլը բերանից կամաց իջնում է չորացած կերակրավողով սովալլուկ ստամոքսը, որ վառում է իր մէջ որևէ բան ծծելու փափագից:

— Գոնէ որևէ արմատներ գտնէինք... հառաչեց զինւորը: — Կան այդ աեսակուտուղ արմատներ...

Բայց սե հերկած հողի մէջ ոչ մի արմատ. Համար: Հարաւալին գիշերը վրայ էր հասնում արագութեամբ, և գեռես չէր հանգել արեւի վերջին ճառագայթը, երբ արդէն մութ-կապոյտ երկնքում սկսեցին փալլիկել աստղերը, իսկ մեր շուրջը աւելի և աւելի խիտ միանում էին մութ-ստուերներ, նեղացնելով մեզ ընդգրկող դաշտի անծալը հարթութիւնը...

— Տղէրք, — կիսաձայն ասաց „ուսանողը“, — այնտեղ ձախ կողմում մարդ է պառկած...

— Մարդ, — կասկածանքի մէջ ընկաւ զինուորը: — Բայց ինչու համար նա պետքէ այնտեղ պառկէ:

— Գնա և հարցըն: Անշուշտ, նա հաց կ'ունենայ, եթէ նա դաշտումն է լուսացնելու... բացատրեց „ուսանողը“: Զինւորը նայեց այն կողմը, որտեղ մարդն էր պառկել և վճռականապէս թքելով ասաց.

— Գնանք նրա մօտ:

Միայն „ուսանողի“ կանաչ և սուր աչքերը

Կարող էին ոլոշել՝ թէ այն խաւար կոյտը, որ  
քարձրանում էր ճանապարհից դէպի ձախ՝ լիսուն  
սաժէն հեռաւորութեան վրայ, մարդ է։ Մենք  
գնում էինք դէպի նա, արագ-արագ քայլելով  
հերկի կոշտերի վրայով, և զգում էինք, թէ  
ինչպէս մեր մէջ առաջ եկած ուտելու յոյսը  
սաստկացնում է քաղցի ցաւը։ Մենք արդէն մօտ  
էինք—մարդը չէր շարժւում։

—Բայց գուցէ դա մարդ չէ—խոժոռ կեր-  
պով յայտնեց զինւորը մեզ ամենքիս համար  
քնդհանուր միտքը։

Սակայն մեր կասկածը հէնց նոյն ըոպէին  
փարատուեց, որովհետև գետնի վրայ գտնուող  
կոյտը յանկարծ սկսեց իրար գալ, բուսաւ, և  
մենք տեսանք, որ դա—հէնց իսկական, կենդա-  
նի մարդ է, որը չոքել էր, մեկնելով դէպի մեզ  
ձեռքը։

Եւ նա ասում էր մեզ խուլ և դողդոջուն  
ձայնով։

—Մի մօտենար,—կ'խիթմ։

Մոայլ օդի մէջ լսուեց մի չոր և կարձ  
չըթկոց։

Մենք կանգ առանք, կարծես հրաման ստա-  
ցած, և մի քանի րոպէ լուռ էինք, շշմուած  
այդպիսի անքաղաքավարի դիմաւորումից։

—Ա՛յ իսկապէս զզուելի մարդ, —ազդու կեր-  
պով մըթմբթաց զինւորը։

—Հա, բաս, — մտախոհ կերպով ասաց առւ-  
սանողը։ Ասրճանակով է ման գալիս... երեխ,  
եղոտ թիքա\*) է...»

Տօ, -բզաւեց զինւորը, երեխ, վճռելով ինչ-որք  
Մարդը լուռ էր, չփոխելով դիրքը։

—Դու, Էյ, մենք քեզ ձեռք չենք տայ...  
միայն թէ մեզ հաց տուր... ունիս, գուցէ. տուր  
բարեկամ, 'ի սէր Քրիստոսի... գու նզովուած,  
անիծուած լինիս։

Վերջին խօսքերը զինւորը արտասանեց իր  
համար բեխերի տակից։

Մարդը լուռ էր։  
—Լսմած ես, —նորից սկսեց խօսել զինւորը,  
դողալով չարութիւնից և յուսահատութիւնից։  
—Դէհ, տուր հաց, Մենք չենք մօտենալ քեզ...  
ձգիր մեզ արն...»

—Լաւ... —կարճ կտրեց մարդը։  
Նա կարող էր մեզ ասել՝ «Իմ թանկագին  
եղբալներ», և եթէ նա թափէր այդ երեք քրիս-  
տոնէացան խօսքերի մէջ բոլոր ամենասուրբ և  
մաքուր զգացմունքները, նրանք չպիտի դրդու-  
ին մեզ այնպէս և մարդկանացնէին այնքան,

\*) Կառը, պատառ, ծ. թ.

ինչպէս այդ խուլ և կարճ՝

— լաւ:

Դու մեզանից մի վախենար, բարի մարդ, —  
մեղմօրէն և քաղցր ժպիտը երեսին ասաց զին-  
ւորի, թէե մարդը չէր կարող տեսնել նրա ժը-  
պիտը, որովհետև մեզանից ամենաքիչը քսան  
քայլ տարածութեամբ անջատուած էր:

Մենք հանդարտ մարդիկ ենք... Գնում ենք  
Ռուսաստանից դէպի Կուբա... ծանապարհին  
ջարդուեցինք առանց փողի, ամեն ինչ մեր վրա-  
ից ծախեցինք, կերանք... իսկ ալժմ ահա ար-  
դէն երկրորդ օրն է, որ չենք կերել...

— Բոնիր, — ասաց բարի մարդը, թափահա-  
րելով ձեռքը օդի մէջ:

Սև կտորը փայլվէց և ընկաւ մեզանից ոչ  
հեռու հերկի մէջ:

„Ռուսանողը“ լարձակուեց նրա յետեից:

— Մէկ էլ բոնիր, մէկ էլ. էլ չկայ...

Երբ „ռուսանողը“ հաւաքեց այդ արտասովոր  
տուրքը, բանից երևաց, որ մենք չորս ֆունտ ցորե-  
նի քարթու հաց ունենք: Նա ընկել էր հողի մէջ  
և շատ քարթու էր: Առաջինը չգրաւեց մեր ու-  
շադրութիւնը, երկրորդը շատ ուրախացրեց մեզ:  
Քարթու հացը աւելի կշտացնող է, քան փա-  
փուկը, նրա մէջ աւելի քիչ թացութիւն կայ:  
— Այսպէս: այսպէս... և այսպէս, — ուշի

ուշով բաժանում էր կտորները զինւորը: — Կաց...  
Հաւասար չէ. քոնից, վարժապէտ, պէտք է մի  
պատառ պոկել, եթէ ոչ նրանը քիչ է...

«Ռուսանողը» անխօս հնազանդուեց կորցնելու  
մի պատառ հաց հինգ մսխալ ծանրութեամբ.  
Ես ստացայ այն ու դրի բերանս: Եւ սկսեցի ծա-  
մել, կամաց ծամել, հազիւ զսպելով ծնօտներիս  
ջղաձգային շարժումը, որոնք պատրաստ էին  
Շքար մշրելու: Ես խիստ բաւականութիւն էի  
Ծստանում, երբ զգում էի կերակրափողիս արագ  
ջղաձգութիւնները և բաւարարութիւն էի տա-  
ջիս նրան քիչ-քիչ, կաթ-կաթ: Բրդում բրդու-  
մի յետեից, տաք ու անբացատրելի, աննկարա-  
գելի կերպով համել, թափանցում էին այրու-  
ող ստամոքսս և, թւում էր, թէ նոյն բոպէին  
գառնում էին ուղ ու ծուծ:

Մի ուրախութիւն, մի այնպիսի արտասովոր,  
անդորր ու կետնք տուող ուրախութիւն, ջեր-  
մացնում էր սիրտս ալնչափ, որչափ լցում էր  
ստամոքսս, և իմ ընդհանուր կացութիւնը նման  
էր մի տեսակ կիսաքնի: Ես մոռացայ քրօնիքա-  
կան քաղցի այդ անիծած օրերի մասին  
և մոռացայ իմ ընկերներին, ամբողջովին  
խորասուզուած այն զգացումների բաւակա-  
նութեան մէջ, որոնց ես զգում էի:



Բայց, երբ ես բոկց բերանս զցեցի հացի վերջին փշանքները, ես զգացի, որ սարսափելի ուտել եմ ուղում:

—Նրա, այդ նղովքի մօտ, ճրագու ևս մնացած կլինի կամ որևէ միս...—մտմտում էր զինւորը, նստելով գետնի վրայ իմ հանդէպ և ճմբելով ձեռքերով փորբ:

—Գուցէ դրա համար հացը մսի հոտ ունէր... գուցէ և հաց էլ մնացած լինի...—ասաց ուսանողը և մեղմ աւելացրեց.

Թէ ատրճանակը չէր լինի...

—Ի՞նչ մարդ է դա, Է.

—Երեխ հէնց մեր բարեկամ Խսակիյն է...

Նուն,—վճռեց զինւորը:

Մենք նստել էինք մի նեղ խումբ կազմած և աչքի տակով նայում էինք այնտեղ, որտեղ նստել էր մեր բարերարը, ատրճանակը ձեռին: Այնտեղից չէին հասնում մեզ ոչ ձայն, ոչ կեանքի նշան:

Գիշերը ժողովում էր մեր շուրջը իր խաւար ոյժերը: Մեռելալին—խաղաղ էր ամեն ինչ դաշտում—մենք լսում էինք միմիանց շունչը: Երբեմն ինչ-որ տեղում լսում էր Սիբիրիալի մկան մելամաղձոտ շւոցը... Աստղերը, երկնքի կենդանի ծաղիկները, վառւում էին մեր գլխի վերև... Մենք ուտել էինք ուղում:

Պարծանքով եմ ասում—ես ոչ շատ վատ և ոչ էլ լաւ էի իմ պատահական ընկերներից այդ փոքր-ինչ տարօրինակ գիշերը: Ես առաջարկեցի նրանց վեր կենալ և գնալ այդ մարդու դէմ: Պէտք չէ նրան ձեռք տալ, բայց մենք կ'ուտենք նրա այն ամենը, ինչ որ կ'գտնենք: Նու պէտք է արձակէ—թող, երեքից միայն մէկին պէտք է դիպչի, եթէ դիպչելու լինի. և եթէ դիպչի էլ, հենց գժուար թէ ատրճանակի գնդակը մարդու մեռցնէ:

—Գնանք,—ասաց զինւորը, ոտքի թռչելով:  
„Ուսանողը“ բարձրացաւ նրանից քիչ աւելի գանդաղ:

Եւ մենք գնացինք, գրեթէ վազեցինք: «Ուսանողը» լետ էր պահում իրեն մեզանից:

—Բարեկամ,—նախատելով բղաւեց նրան զինւորը:

Մեր հանդէպ տարածուեց խուլ մըթմըթոց և չըթկացող կայծհանի զիլ ձայն: Ահա պսպղաց կրակը, լսուեց բոմբիւնի մի չոր ձայն:

—Մօտ, —ուրախ ուրախ բացականչեց զինւորը, մի ցատքումով հասնելով մարդու մօտ: —Այ, դև, ես հիմա քեզ ցոյց կ'տամ...

„Ուսանողը“ յարձակուեց դէպի մախաղը:  
Իսկ գեղ ընկաւ ծնկներից մէջքի վրայ և, ձեռքերը փռելով, խռկաց...

Ա՛յ քեզ սատանի բան,—զմայլուեց զինւորը, որ արդէն բարձրացրել էր ոտը, որպէսզի քացի տար ալդ մարդուն։ Զլինք թէ ինքը իր վրայ պարպեց։ Տօ, ալդ ինչ է, էլ, խփեցի՞ր քեզ, ինչ է։

—Թէ միս, թէ ինչ-որ բոգոններ, թէ հաց… շատ, տղէրք,—լսուեց «ուսանողի» զուարիթագին ձայնը։

—Դէհ, ջայնամ թէ կ'սատկես… Ուտենք տղէրք,—բղաւեց զինւորը։ Ես դուրս քաշեցի առջրճանակը մարդու ձեռքից, որը արդէն դադարել էր խռալուց և պառկել էր այժմ անշարժ։

Փամփշտարանում դեռ ևս կար միայն մի փամփուշտ։

Մենք նուից ուտում էինք, ուտում էինք սուս ու փուս։ Մարդը նոյնպէս պառկել էր և լուռ էր, չշարժելով ոչ մի անդամը։ Մենք ուշադրութիւն չէինք դարձնում նրա վրայ։

—Միթէ, տղէրք ջան, դուք ալդ բոլորը միայն հացի համար,—յանկարծ լսուեց խռալու և դողդոջուն ձալն։

Մենք բոլորս գող ընկանք։ «Ուսանողը» նոյն իսկ խեղդրաւուեց և, կռանալով գետնին, սկսեց հազար։

Զինւորը, պատառը ծամելուց յետով, սկսեց հայութել։

—Գու, շնորհուած մարդ, բալքի ճաքճքուիս չոր կոճղի պէս։ Ի՞նչ է, կաշի՞դ պիտի քերթենք մենք քո վրայից։ ինչերիս է հարկաւոր։ Քո՞ լիմար գունչը, կեղանուտ գե, ինչերիս։—զինւուել է և մարդկանց վրայ կրակ է տալիս։ նզփուած գու…

Նա հայութեամ էր և ուտում, որի համար նրա հահուանքը կորցնում էր ամբողջ ազգեցութիւնը և ուդը։

—Սպասիր, ահա մենք կ'ուտենք, ապա քեզ հետ մեր հաշիւը կ'տեսնենք, — չարագուշակ կերպով խոստացաւ «ուսանողը»…

Այդ ժամանակ գիշերուալ լոռութեան մէջ լսուեցին ոռնացող հեծեծանքներ, որոնք վախեցրին մեզ։

—Բարեկամներ… միթէ ես գիտէի։ Արձակում էի… որովհետեւ վախում եմ։ Գնում եմ նոր-Աթոնից… Սմոլենսկի նահանգը. . օհ, Տէր Աստւած. տենդը ճարից գցեց… հէնց որ արեւը մայր մտնի- իմ վայն է։ Տենդի պատճառովն է, որ Աթոնից հեռացայ… հիւսնութիւն էի անում այնտեղ… ես հիւսն եմ… Տանն են կինս… երկու աղջիկներս… երեք տարի վրայ չորրորդն է, որ չեմ տեսել նրանց… տղէրք, բուլորը կերէք…

— Առանց քո խնդրելուն էլ կ'ուտենք, — առաց «ուսանողը»:

— Տէր Աստուած, եթէ ես գիտենայի՞ թէ դուք խաղաղ, լաւ մարդիկ էք... միթէ ես կ'արձակէի, իսկ այստեղ, աղբէր, չօլ\*) է, գիշեր... միթէ մեղաւոր եմ ես:

Նա խօսում և լալիս էր, աւելի ճիշտ — արձակում էր մի տեսակ դողդոջուն, երկոտ ոռնոց:

— Այ երեսը դէմ է տալիս, — արհամարանքով ասաց զինւորը:

— Նա պէտք է փող ունենալ իր հետ, — յալտնեց „ուսանողը”...

Զինւորը կկոցեց աչքերը, նայեց նրան և ծիծաղից:

— Իսկ դու շնոր գլխի ընկնող ես... Այ ինչ, եկէք խարոյիկ վառենք և ապա քնենք...

— Իսկ նա, — հետաքրքրուեց «ուսանողը»:

— Զայնամ. խոմ խորովելու չենք նրան, ինչ է:

— Պէտք էր — շարժեց „ուսանողը” իր սուր գլուխը:

Մենք գնացինք բերելու մեր հաւաքած բաները, որ թափել էինք այնտեղ, որտեղ կանգնեցրեց մեզ հիւսնը իր սպառնալի ձայնով, բերեցինք այն և շուտով նստած էինք խարոյիկի շուրջը:

\*) Ամայի դաշտ ծան, թարգ.

Նա հանդարտ վառւում էր խաղաղ գիշերը և լուսաւորում նրա մէջ այն փոքրիկ տարածութիւնը, որ բռնել էինք մենք: Մեր քունը տանում էր, թէև մենք այնուամենայնիւ կարող էինք մի անգամ ևս ընթրել:

— Տղերք, — ձայն տուեց մեզ հիւսնը: Նա պառկել էր մեզանից երեք քայլ հեռաւորութեան վրայի, և մերթ ինձ թւում էր, թէ ինչոր վափառում է:

— Ա՞հ, ասաց զինւորը:

— Կարելի՞ է ձեզ մօտ գալ... կրակի մօտ: Իմ մահը մօտենում է... ոսկորներս ողջ ջարդուում են... օհ, Աստուած, երեսում է, որ ես չպէտք է տուն հասնեմ...

— Քաշութիր այստեղ, — թուլատրեց «Ուսանողը»:

Հիւսնը կամաց-կամաց, կարծես վախենալով կորցնել ձեռքը կամ ոտք, շարժուեց գետնի վրայով դէպի խարոյիկը: Դա մի բարձրահասակ և սարսափելի նիհարացած մարդ էր. աւեն ինչ նրա վրայից մի տեսակ թափթփում էր, և մեծ, մուայլ աչքերը արտացոլում էին նրան հալ ու մաշ անող ցաւը: Նրա ծռմռուած գէմքը ոսկրոտ էր և նոյն իսկ խարոյիկի լոյսի առաջ մի տեսակ գեղնաւուն — հողալին մեռելալին գոյն ունէր: Նա ամբողջովին դողում և արհամա-

բական ցաւակցութիւն էր զարթեցնում։ Մեկնելով իր երկար, նիշար ձեռքերը խարոյկի կը-րակին, նա շփում էր իր ոսկրոտ մատները, և նրանց յօդերը ծռւում էին թոյլ, դանդաղ։ Վերջապէս, նրա վրայ մարդ զզւում էր նայել։

— Այդ ինչ է քո շնորհը—և ոտնվ ես գնում։  
— Ժլմա ես, ինչ է, —խոժոս կերպով հարցրեց զինորը։

— Ինձ խորհուրդ տուին... չգնաս, ասում են, ջրավ... այլ գնա Խրիմով, օդ կալ, ասում են։ Իսկ ես ահա չեմ կարող գնալ .. մեռնում եմ, բարեկամներ։ Կմեռնեմ մենակ դաշտում... թռչունները կ'կտցահարեն, և ոչ ոք չի իմանայ... կինս, աղջիկներս պէտք է ճամբաս սպասեն,  
— գրել եմ նրանց... իսկ իմ սոկորները դաշտային անձրեները պէտք է լուանան... Աստուած իմ, Աստուած։

Նա ոռնաց վիրաւոր դալլի վշտոտ ոռնոցով։  
— Դէհ, չօռ, — կատաղեց զինորը, ստքի թռչելով... ինչ ես վայնասուն զցել։ Ի՞նչ է դու մարդ-կանց հանգիստ չես տալիս։ Սատկում ես, գէ՛ն սատկիր և լոիր։ Ո՞ւմ ես դու հարկաւոր, սուս։  
— Մի հատ տնւը գլխին, առաջարկեց ուսանողը։  
— Պառկենք քնելու, — ասացի ես... — իսկ դու,  
եթէ ուզում ես կրակի մօտ մնալ, ուրեմն չոռ-

նաս ուղիղն ասած...

— Լսեցիր, — կատաղութեամբ ասաց զինորը։  
Ուրեմն և հասկացիր։

Դու կարծում ես, մենք քեզ պէտք է խըդ-ձանք և քեզանով զբաղուենք նրա համար, որ դու մեզ հաց էիր շարտում կամ գնդակներ ար-ձակում։ Դու, թթուած անիրաւ։ Ուրիշները գու-ցէ... թռն...

Զինորը ձայնը կտրեց և երկնցաւ գետնի վրայ։

Ուսանողը արգեն պառկել էր։ Ես նոյնպէս պառկեցի։ Երկիւղահար հիւսնը կծկուեց, ինչ-պէս գունդ և, մօտենալով կրակին, լուռ սկսեց նայել նրան։ Ես պառկել էի նրանից գէպի աջ և լսում էի, թէ ինչպէս զարկում էին նրա ա-տամները։ «Ուսանողը» պառկել էր ձախ կող-մից և, երկի, միանգամից քնել էր, դառնալով գունդ։

Զինորը, գնելով ձեռքերը գլխի տակ, պառ-կել էր երեսը գէպի վեր ուղղած և նայում էր երկնքին։

Ի՞նչպիսի գիշեր է, ահ։ Որքան աստղեր... ալախաշխան... գիմեց նա ինձ քիչ յետոյ։ — Իսկ ինչ երկինք — վերմակ է, ոչ թէ երկինք։

Սիրում եմ ես, բարեկամ, այս թափառական

կեանքը: Նա թէ ցուրտ, թէ անօթի կեանք է, քայց շատ ազատ է արդէն... Զկայ գլխիդ ոչ մի իշխան... դու ինքդ քո կեանքի տէրն ես... թէկուզ գլուխդ կտրիր—ոչ ոք քեզ մի խօսք չէ կարող ասել... Լաւ է... Բաւականին քաղցեցի ես այդ օրերին, շատ շարացայ... իսկ ահա ալժմ պառկել նայում եմ երկընքին... Աստղերը աչքով են անում ինձ... կարծես ասում են՝ ոչինչ, Լակուտին, ման առի երկրէ-երկիր, բան տես և ոչ ոքի անձնատուր մի եղիր... այս... Սիրտս էլ լաւ է... Իսկ դու... Քնչպէս քեզ. Էլ, հիւսն: Դու մի բարկանար ինձ վրայ և ոչնչից մի վախենար... Որ մենք քո հացը կերանք, դա ոչինչ—դու ունեիր հաց, իսկ մենք ոչ, մենք քոնը և կերանք... Իսկ դու, վարենի մարդ, գնդակներ ես արձակում... Մթթէ դու չես հասկանում, որ գնդակով վնաս կարելի է հասցնել մարդու: Ես քեզ վրայ քիչ առաջ շատ զարցացել էի և եթէ դու չընկնէիր, ես քո հախից կ'գալի, բարեկամ, քո յանդգնութեան համար: Իսկ հացի կողմից—կը-հասնես վազը Պերեկօպ և կ'զնես այնտեղ—դու փող կ'ունենաս... ես զիտեմ... Վաղուց է դու շերմում ես:

Երկար դեռ ևս իմ ականջներում զօղանջում

էին զինւորի հաստ և հիւանդ հիւսնի դողդու ջուն ձալները: Գիշերը—մուժ, գրեթէ սև իշնում էր շարունակ աւելի ցած գեպի երկիրը, և թարմ հիւթալի օդը լցում էր կուրծքսւ Խարոյկից բարձրանում էր միապաղադ լոյս և կենդանացնող ջերմութիւն... Աչքերս կպչում էին, և նրանց առջև, կէս-քուն, կէս-արթուն, կատարում էր ինչ-որ հոգեպարար ու քաւիչ բան:

• • • • • • • • • • • • • • • • • •

—Վեր կաց, շնուր, գնում ենք:

Ես բաց արի աչքերս երկիւղ զգալով և արագ ոտքի թռալ, որին օգնեց զինւորը, ուժգին վեր քաշելով ինձ գետնից, ձեռքիցս բռնած:

—Դէհ, ժիր, քայլէ:

Նրա դէմքը դաժան և այլալլուած էր: Ես նայեցի չորս կողմս: Արեւ դուրս էր գալիս, և արդէն նրա վարդագոյն ճառագալթը ընկել էր հիւսնի անշարժ և կարոյտ երեսին: Նրա բերանը բաց էր մնացել, աչքերը դուրս էին ընկել փոսերից և նայում էին ապակեալ հայեացքով, որ սարսափ էր արտայալտում: Հանդերձը նրա կրծքի վրայ ամբողջովին պատաւոտուել էր. և նա պառկել էր անբնական—ջարդուած դիրքով «Ուսանողը» չկար:

— ԵՇՀ, ժամանակ գտար նայելու. արի, առում եմ,—համոզիչ կերպով ասաց զինւորը, քաշելով ձեռքիցս:

—Մեռել է նա,—հարցրի ես, դողալով վաղորդեան թարմութիւնից:

—Ի հարկէ: Եթէ քեզ խեղդեն՝ դու էլ կըմեռնես,—բացատրեց զինւորը:

—Նրան... „ուսանողը“,—բացականչեցի ես:

—Հապա էլ ով. դու, կարելի է, կամ թէ ես. հա, բաս: Ահա քեզ և ուսեալ... Լաւ է գլուխ թափել մտրդու հետ... իր ընկերներին էլ շառի մէջ դցել... Եթէ գիտենալի այդ, ես երէկ այդ ուսանողին կ'չորցնէի. կ'չորցնէի միանգամից ևեթ: Եախկ մի բոռնցքով նրա քունքին... և չկայ ալլես աշխարհում մի զըզուելի մարդ: Դու գլխի ընկննմ ես արդեօք՝ թէ նա ինչ է արել: Ալժմ մենք ստիպուած ենք այնպէս գնալ, որ ոչ մի մարդու աչք մեզ չառնի դաշտում: Հասկացար: Որովհետև հիւսնին արսօր կ'դտնեն և կ'տեսնեն՝ խեղդուած ու կողոպտուած: Եւ պէտք է հետեւն մեր բարեկամին... որտեղից ես գալիս, որտեղ էիր գեշերել, հը—հը և կ'բռնեն մեզ... թէև ինձ մօտ ոչինչ էլ չկայ, ինչպէս և քո... բայց նրա ատրճանակը ինձ մօտ անթատակիս է: Լաւն է:

—Դու այդ վեր դցիր, —խորհուրդ տուի եռ զինւորին:

—Գցեմ,—մտախոհութեամբ ասաց նա... արժէքաւոր բան է... բայց կարելի է մեզ գեռ. ևս չեն բոնի... Ո՞չ, ես չեմ դցի... Ո՞վ է իմանում՝ թէ հիւսնի մօտ զէնք է եղել: Զեմ դցի... նա երեք ուուբլի արժէ: Գնդակ կայ նրա մէջ... այ—այ. ինչպէս ես այս գնդակը մեր սիրելի բարեկամի ականջին կտժժացնէի:

Տեսնես, շնորհ, ինչքան փող է ճանկել. նզովուած:

—Ահա քեզ և հիւսնի աղջիկներ...—ասացի ես:

—Աղջիկներ. որո՞նք. հա... դրա... էհ, նրանք որ մեծանան, խօմ մեզ առնելու չեն, նրանց մասին խօսք չէ կարող լինել... դէհ, գնանք, բարեկամ, շուտով... Ո՞ւր գնանք:

—Ես չգիտեմ... Միկենոյն է:

—Ես էլ չգիտեմ և գիտեմ, որ միւսոյն է: Գնանք գէպի աջ—այնտեղ ծով պէտք է լինի:

Մենք գնացինք գէպի աջ:

Ես յետ գարձայ: Մեզանից հեռու բարձրանում էր դաշտում մի մութ բլրակ, իսկ նրա գլխին փալլում էր արել:

—Նայում ես՝ թէ գուցէ յարութիւն առնի: Մի վախենար, վեր չի կենայ, մեզ հասնի...

Ուսեալը, երևում է, որ հունարով տղամարդ է, քանը հիմնովին է տեսել... այ ընկեր: Նա մեղ ւաւ շառի մէջ գցեց: Ե՞հ, բարեկամ, վշանում են մարդիկ տարէ ցտարի, փշանում են շարունակ աւելի և աւելի,—տիրութեամբ ասաց զինորը: Դաշտը, լուս և ամայի, ողողուած ամբողջովին առաւոտեան պայծառ արեով, բացւում էր մեր շուրջը, միախառնուելով հորիզոնում երկնքի հետ այնպիսի պարզ, այնպիսի վիալաքշալի և առատ լուսով, որ ամեն-մի սկ ու անարդար գործ թւում էր անհնարին այդ արձակ, երկնքի կազոլու գմբէթով սքօղուած դաշտավայրի մեծ տարածութեան մէջ:

— Բայց ախր ուտել ենք ուզում, բարեկամ, ասաց իմ ընկերը, մախօրկաչից ծխամուրջեր փաթաթելով...

Ի՞նչ ենք մենք այսօր ուտելու և որտեղ ու ի՞նչպէս:

Հարց է.

Դրանով պատմողը—հիւանդանոցի մահճակալի վրայ պառկած իմ հարեւանը—վերջացրեց իր պատմուածքը, ասելով ինձ.

— Ահա և բոլորը: Ես մօտ ընկերացաւ այդ զինորին և մենք նրա հետ միասին հասանք

մինչև Կարսի շրջանը: Դա մի լաւ և շատ փորձուած տղայ էր, տիպիք շրջմոլիկ—բօսեակ:

Ես յարգում էի նրան: Մինչև Փոքր—Ասիա մենք միասին էինք գնում, իսկ ալնտեղ կորցը ըինք միմիանց...

— Դուք լիշում էք երբեմն հիւսնի մասին, հարցը ես:

Բան չունես...

— Եւ...ոչինչ.

Նա ծիծաղեց:

— Ախր ես ի՞նչ պէտք է զգամ ալդ գէպքում: Ես մեղաւոր չեմ այն բանում, ինչ որ նրան պատահել է, ինչպէս որ դուք մեղաւոր չէք այն բանում, ինչ որ իմ գլխին է եկել... Եւ ոչ ոք ոչ մի բանում մեղաւոր չէ, որովհետեւ մենք բոլորս էլ հաւասարապէս—անասուններ ենք:

## Գ Ե Ր Զ



ՀՀ Ազգային գրադարան



NL0317656

10.648

БИБЛИОТЕКА  
Института  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР



Գալիքում ԵՅ Տիֆլիսի Խեցընթական Ա.  
Ալ. Բաբավարապօլի գրախառատնոցներում